

Մարզային ենթակայության ուսումնական հաստատությունները՝ Կոտայքի մարզպետի ուշադրության կենտրոնում

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի, մարզպետարանի ոլորտային պատասխանատուների հետ այցելել է Աբովյանի թիվ 8 և թիվ 10 հիմնական դպրոցներ՝ ծանոթանալու կրթական պրոցեսի կազմակերպմանը եւ ընթացիկ ծրագրերին:

Նախ դիտարկել են Աբովյանի թիվ 8 հիմնական դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքները. դահլիճի շինարարությունն իրականացվում է մարզպետարանի կողմից հատկացվելիք ֆինանսական վերաբաշխումների և բարեգործական հիմունքներով:

Մարզպետը մատնանշել է որակյալ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը՝ հետագայում խնդիրները բացառելու համար:

Ապա մարզի ղեկավարն այցելել է Աբովյանի թիվ 10 հիմնական դպրոց: Այստեղ վերջերս իրականացվել են միջանցքների, դասասենյակների վերանորոգման աշխատանքներ: Դրանց որակի վերաբերյալ մարզպետի կողմից դիտարկումներ են եղել. բոլոր թերությունները և անորակ աշխատանքները շատ արագ պետք է շտկվեն շինարարների կողմից: Այս ուղղությամբ դպրոցի տնօրենին տրվել է հստակ հանձնարարական:

Ընթացիկ ծրագրերի և խնդիրների վերաբերյալ Ահարոն Սահակյանը զրուցել է նաև դպրոցի աշխատակազմի հետ:

Կոտայքի մարզպետն այնուհետև այց է կատարել նաև Աբովյանի դրամատիկական թատրոն, շրջել տարածքով:

Համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի և թատրոնի պատասխանատուների հետ քննարկվել են համայնքային և պետական միջոցների համատեղմամբ թատերական կյանքի աշխուժացմանն ուղղված քայլերը:

Այս թատրոնն ունի լավագույն պոտենցիալը, ու պիտի արվի առավելագույնը, որպեսզի համապատասխան պայմանների առկայություն լինի ապահովենք ոչ միայն այս, այլ, առհասարակ, մարզի բոլոր մշակութային ու արվեստի կենտրոններում: